



ՄԱՐԺԱՐԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՄԱՐԺ 11 ԱՊՐԵԼ 1887

ԹԻԻ 3868

ՄԱՐԺԱՐԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ծեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրեալները դրկելու է առ մատակարարութիւն Սրեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Ա. Ազգային (Հեռագրանոցի կառուցման հարցեր) Ե. ՏԵՄԵՐՃԻՊԱՇԵՆ Փոքի (Առ Թ. Թերզեան) Ս. ՅՈՎՆԱՆԵԱՆ Ժօրժ տը Բարի կաշինայի պալատը (ՄԵՍԿ) Կովկասեան լուրեր ՊԼԱՏՈՆ ԶՈՒԲՕՎ Ղարաբաղի աստղագէտը Բաղաքական

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՌԻԲԱԹ 10 ԱՊՐԵԼ

ԱԶԳԱՅԻՆ

ՀԻՒՆԱԳԱՆՈՅԻ ԿՈՌՈՒՅՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Ազգային նոր Հիւանդանոցի մը կառուցման խնդիրը բաւական ժամանակ օրուան կարեւոր խնդիրը լինելէ յետոյ այլ եւս ազգային հոգածութեան առարկայ չէ: Եւ սակայն նոր շէնքի մը հարկն անհրաժեշտ է: Կիսագարեան այն խեղճ, փրփրած, փայտաշէն ապաստանարանն ո՛չ թէ վատառողջներու այլ եւ քաջառողջներու անդամ ամէն տեսակ հիւանդութիւններ պատճառելու կատարելապէս բաւական է: Գիծութեան եւ բարեքորութեան զգացումները տակաւին բաւական զօրաւոր լինելով Պոլսոյ Հայոց քիչ թէ շատ ընչաւէտ դասուն վերաբերող անձանց ոմանց սրտերու մէջ եւս, խորհուրդ յղացան նոքա կառուցանել նոր հիւանդանոց մը, Հանդանակութեան թուղթ մը ըսկաւ ստորագրուել. շէնքն՝ զոր պիտի կառուցանէին, նորա յատակագիծն պատրաստելու աշխատութեանց ձեռնարկուեցաւ: Մանրամասնութիւնները քանի քանի անգամ արձանագրուեցան Պոլսոյ լրագրաց մէջ, Թուրքիոյ, Ռուսիոյ, Եւրոպիոյ հայք խանդավառանք

հնչեցին անուաններն այն Հայոց՝ ոյք ձեռնարկած էին այս գործին: Բայց շէնքի կառուցման խնդիրն այն վիճակին մէջ է այսօր՝ ուր էր քսան տարի առաջ:

Բայց միթէ զղացելն նոքա ոյք այդ գործին ձեռնարկած էին: Չենք կարծեր: Դեռ երէկ կ'ապահովէին զմեզ թէ Կիւլպէնկեանը պատրաստ են անմիջապէս վճարել իրենց ստորագրած 4,000 ոսկին երբ եւ պահանջուի: Տարակոյս չկայ թէ ստորագրող միւս անձինք եւս նոյն տրամադրութիւնն ունին, հետեւաբար շէնքին կառուցման խնդիրն անպայման կերպով յետաձգելու կամ հանդանակութեան ստորագրութիւնը փակելու պատճառ մը չկայ:

Ոմանք կ'առարկեն թէ նոր Հիւանդանոցն ի Բերայ կառուցանելու փափազ կայ եւ թէ այդ պատճառաւ սկսուած ձեռնարկն առ կախ թողուած է: —Այս առարկութիւնը կըրնանք կարեւորութեան գուրկ համարել: Նախ որ նոր հիւանդանոցի հիմնադիրը արդէն հարկ եղած միջոցներուն դիմած են զայն ի Սամաթիա կառուցանել տալու համար, ապահով լինելով թէ անհնարին է, զանազան պատճառներով, հիւանդանոցն ի Բերայ կառուցանել:

Եթէ այս փափազն ունին եւ հետամուտ են իրականացնելու, այդ պատճառ մը չէ որ հանդանակութեան համար բացուած ստորագրութիւնը չարուանակուին: Սակայն գիտենք թէ ներքին պատճառ մը կայ (բոլորովին տարբեր տեղւոյ խնդրէն) որով ստորագրութիւնը չեն շարունակուիր: Այդ պատճառն հետեւեալն է: Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամներէն մին չէ ուղած մասնակցիլ հանդանակութեան, շարունակ պատրուակներ առաջ բերելով. նորա ընկերակիցը կը կարծեն թէ Հոգաբարձութեան այդ անդամին անունն եթէ չտեսնուի հանդանակութեան տետրին մէջ, ուրիշ անձինք պիտի դժկամակին ստորագրել, ըսելով թէ նոյն իսկ հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամ մը զլացած է իւր նպատակը:

Հոգաբարձութեան այդ երկիւղն անհիմն է: Հիւանդանոց մը կառուցանել եւ հիւանդանոց մը խնամել անպատճառ մի եւ նոյն անձանց պարտականութիւնը պէտք չէ համարել: Ինչպէս Բաղաքական Ժողով մը պատ-

րկաբարանը իւր ծախիւքը վերանորոգելու պարտական չէ կամ թէ Թաղ Խորհրդոյ մը անդամք իրենց անձնական ստակովը Թաղին դպրոցը շինելու հարկադրեալ չեն, այսպէս ալ Հիւանդանոցի Հոգաբարձութիւն մը իւր անդամոց անհատական ծախիւքն հիւանդանոց մը շինելու պարտական չէ: Կրնար լինիլ որ Հիւանդանոցի արդի Հոգաբարձութեան անդամոց մեծ մասը լինէին այնպիսի անձինք ոյք շատ պարկեշտ, բարոյապէս շատ կարող եւ հիւանդանոց մը խնամելու ձեռնհաս լինելով հանդերձ, նիւթական կարողութեան տէր չլինէին, միթէ այդ լուրջ պտտածառ մը պիտի համարուէր որ նոր հիւանդանոցի մը պէտքն զգալի չլլար:

Ի հարկէ ոչ ոք դժգոհութիւն մը կ'ունենար արդի Հոգաբարձութեան դէմ եթէ նա չձեռնարկէր Հիւանդանոցի կառուցման: Ամեն ոք պիտի լըռէր: Այդ անձինք խնամելով հիւանդանոցը կը կատարեն ազգային պարտականութիւն մը: Թո՛ղ ուրիշ խումբ մ'ալ, նոյն դասու վերաբերեալ անձերէ, ձեռնարկէ Հիւանդանոցի մը կառուցման, պիտի ըսուէր:

Ուրեմն Հիւանդանոց մը խնամելու եւ հիւանդանոց մը կառուցանելու պաշտօններն իրարմէ անջատ պէտք է նկատել, բայց եթէ մի եւ նոյն անձինք սոյն երկու պարտականութիւնները միանգամայն կը կատարեն, կրկնակի շնորհակալ կ'ըլլանք իրենց, բայց չենք կրնար ընդունիլ որ իրենցմէ միոյն անուն բացակայութիւնը կարենան պատճառ մը համարել հանդանակութիւնը դադարեցնելու: Ինչպէս այդ անձն նոյնպէս նիւթական կարողութեան տէր ուրիշ անձինք անշուշտ պիտի չուզեն մասնակցիլ հանդանակութեան, կամ պիտի բաւականանան խիտանանչան գումար մը ստորագրելով, բայց ի՞նչ կրնանք ըսել: Տասը ոսկով —ինչպէս կ'ըսէր Նուրեան էֆէնտի— ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ Կոչուելու դիւրութիւնն այնքան ընդհանրացած է որ շատերը այլ եւս չեն կարող ըմբռնել թէ մի քիչ աւելի զոհողութիւն պէտք է այդ տխուրոսին արժանանալու համար:

Սակայն միթէ ոման գրամական զոհողութիւն փառաց տխուրոսի մը ակնկալութեամբ պէտք է լինի: Դրութեան մարդասիրութեան, անչափախնդրութեան, ամէն ազնիւ զգացումները արդեօք պէտք է Հայոց սրտերէն բոլորովին տարադրեալ համարել:

Ա. Ա.

Փ Ո Շ Ի

Ա.Ռ. ԹՈՒՎԱՍՏ ԹԵՐԶԵԱՆ(1)

Որո՞ց զըրեհն ինձ, ո՞յց երգեն զիմօգեակ,
Ի պատասխան պատմեմքդ կեանս իմ յուզեալ:
Կեանք՝ ոյր մէջէն արեան հոսէ մութ վրտակ,
Կեանք՝ զոր պեղեն սեաւ մըտածմունք եր-
կաթեայ:

Ա.

Ի Պէշիկթաշ երբ բնակէի ես, հանդէպ
Սուրբ տաճարին(2) ընդ թմբենեօք սիրաբոյր,
Հոգմն որ յառնէր, խըլէր տանէր զիս հապ-
ճեալ:

Տօլմա-Պահչէ, ծառուղին այն լայն ու խոր:

Ի՞նչ է փոշին. ո՞չ տիեզերքն է անի... —
Եւ զիտէի զփոշիացեալ տիեզերս,
Զոր ի բարձանց հոգմն յայն ածէր ծառուղի,
Զոր ի խորոց հանէր այնդ էն ի բարձունս:

«Զի՞նչ է փոշին» հարց տունէի տըրտմազին,
Մինչ օղապար հեղեղ ըստուար իջանէր
Բերայէն վար՝ Տօլմա-Պահչէն զրախտային,
Հեղեղ փոշոյ գորշ, համագոյն, երկնաբերձ:

«Զի՞նչ է փոշին» Եւ յիշէի խիճն եւ ոտք,
Որք ընդհարեալ միմեանց մեղմիկ կամ ուժ-
գին,

Կազմեն փոշի: Նոյնպէս տրոփուն թեւք,
զիրդ խոտք
Իրեարց հարեալ՝ ծընին աճին եւ փոշի:

«Ուստի՞ փոշին» Ի թաթիկէն նաղելոյն,
Ի գեղաբոյր ծաղկէն՝ զոր ձեռքն իւր ունի,
Յոսկի հերացն՝ ոյց նախանձին շողք արփւոյն,
Յարեգէն խիկ — զի և՛ աստղն է նիւթ, հիւլէ:

Եւ երբ շըրթունքն իմ հըրապառ հըպին լուռ
Այտինցն՝ ուր բնաւ վարդք զիւրեանց հիւթն
են հեղած՝

Զոր կամ հեղուկ, աստուածայինն այն համ-
բոյր

Արտադրէ միշտ — թէ է անտես, նուրբ — փոշի:

Փոշի՛, Հոգւոյս յայն հաճոյ էր պողոտայն
Տեսնել փոշին ծածկել զտերեւս և ըզթեւս.
Զծառոց տերեւս ուղւոյն այն խոր, լայն,
երկայն,

Զաղակնեկաց թեւսն՝ որք ունին անդ չէն
բոյն:

Բ.

Փոշի՛, Այո՛, ի մէջ փոշոյ հեղեղին,
Աղօ՞թ թըռչունքն այն լողային հաճոյի՛ւք.
Դընդիւն արագ իւրեանց թեւոց խառնըին
Ահագնադոշ հոգմոց ձայնին, կորչին յայն:

Ծածկեալ փոշուով, ծանրաբեռնեալ, պար-
տասեալ,

Դըլնոյս վերեւ վուզուելով սիրագին,
Դընան մըտնել ի խորչս ի սեաւ այլեայլ,
Զորս որմոց մէջ հաւուցն համար են բացած:

Ո՛չ ևս փոշոյն ա՛յլ ես խորհիմ: Աչք յորմունս
Թըռչնոյն խորհիմ: Խորհիմ՝ ապա Խալափին.
Գանգի Խալափն, նա՛ հաստատեաց հաւուց
բոյնս:

— Խալափն է մեծ յաղինս համայն հին և նոր:

(1) Ի պատասխան իւր բանաստեղծութեան՝ հը-
րատարակեալ ի Մարտ ամսաթիւ «Գրական և Իմաս-
տասիրական Շարժումն»:
(2) Յաւանք եկեղեցւոյն:

Ո՛հ, սիրեմ ես զագգն՝ ոյր մահիկն է նըշան.
Մահիկն՝ որ միայն յաստղունս թըլի կեն-
դանի,

Աճմամբ իւրով ու նուազմամբն հիւժական.
— Խալափուհւոյն այնքան է նման իմ լուսնակ:

Մահիկն — յիւր դրօշ, Ալլահն յիւր շուրթսն
անհեղձող,

Միաստուածեան ու բանաստեղծ փողովուրդ,
Սէճաբէռն ոսկի՛ ծածկէ նա զսեւ հոգ:
Դընէ ի ծուներ ի տես մահիկին նորալոյս:

Բնութեան զաւակ, աղօթ է նա բացօթեայ.
Աղօթ է լուռ՝ զերդ զաշտին խոտն և զերդ
աստղ:

Վըճիւր ալեակն արծաթափայլ բիւրեղեայ
Նախ մաքրէ զձեռն որ համարձցի առ
Աստուած:

Ո՛վ Խալափին Աստուած միակ, մեծ, հզօր,
Որքանի՛ ձեռք Գեղ համբառնան յերկրի աստ.
Յեւրոպ, յԱսիա և յԱփրիկէն արփաւոր,
Զընաղագոյն վայրք անուամբք են առլըց-
եալ:

Ո՛չ աղանեակք Տօլմա-Պահչէ ծառուղւոյն,
Իրենց բոյնէն՝ զոր Խալափին ձեռքն հաստեաց,
Ո՛չ միշտ գոչեն, ո՞չ յար մընչեն աղուագոյն.
«Ալլահ, միայն Ալլահն է մեծ, ճըշմարիտ»

Եւ ոչ յորմունս և եթ զրախտից, այլ յիւր
տուն

Շինէ Խալափն աղանեատունս սիրունակ.
Աղանեկաց երգօք զարթնու նա այգուն,
— Որպէս հրեշտակք եկեղեցւոյն մեր սըրբոյ:

Եւ լիովին ո՞չ է հանգէտ տաճարի
Տունն Խալափին, յորոյ ճակատն՝ ոսկեառաւ.
Շողայ Ալլահն — երբ արեգակն խիկ մարի.
Յաւերժական լոյսն յԱլլահին ցոլայ թեւս:

Լայն նըրբաւարտ տառքն արդարեւ են թե-
ւոց

Հանգոյն եւ ինձ թըլի, երբ ծայր տայ
լուսնակ,

Թէ շարժին թեւքն, որպէս ի վեհ արփւոյն —
շող

Շարժէր արձանն և զեղղեղէր առ Նիւթայ:

Գ.

Մըտածելով այսպէս, վարեալ ի հողմոյն,
Գըտանէի զիս յանըզդայս բարձանց վրայ.
Անդ եւ փոշին խիտ, անհամար և տըմոյն.
— Ամենուրեք է, վերջ բնաւից է փոշին...

Եւ յետադարձ ա՛յնարկ ձգեմ ըննադ մամբ:
Պօսթօրն հոսէ, կապոյտ, ձերմակ, վէտ ի
վէտ:

Յաւերժարանց հանգոյն յափունս իւր
մարմարք

Փայլին, նաղին հրագունակ ի վարդենիս:

Դո՛ւ զայս գոհար, Ալլահ՛, աղգին բում
տուեր:

Նա՛ ըժանադոյն գտաւ վարդին, պուլ-
պուլին:

Զոյգ թափանցիկ քօղից ընդմէջ Դո՛ւ լուցիր
Զոյգ այն աչքերն՝ ոյց գաղտ զէտակն կայ
սոխակ: —

Աստէն երրեակ իրք են չընաղ, գեղահըրաշ.
Արեւելից աշխարհն՝ իւրեանց բնագաւառ.
Խալափուհիւն, վարդն ու պուլպուլ — Պէշիկ-
թաշ:

Սոխակին բոյն, վարդին, կընոջ գըրգա-
րան: —

Եւ անդ կասիմ բարձանց վըրայ. հայիմ յետս
Ի Պէշիկթաշ՝ որ ընդ թեւօքն աղաւ նեաց՝
Հանգչի զմայլուն յիւր ի ծաղկոցս հեշտա-
ւէտս:

Ծոցոյ բուրում մ՛ըզգըլմէ զիս... Պէշիկ-
թաշ...:

Դ.

Եւ դառնամ յետս իջնեմ ի վայր՝ Պէշիկթաշ:
Եւ խայտարկէտ գան ընդ առաջ իմ գում-
բուք:

Ծառք բարձրաբերձ ծածկեն զերկին, յայտ-
նեն, վա՛շ...:

Յայտնեն զհոգւոյս մութ խորս, զմաւալ
խորչս սըրտիս —

Սըրտիս մէջ «էր, ի մէջ հոգւոյս էր հաւա-
կարձէի թէ անչէլ են անյք և՛ անվախճան.
Այլ առաջին համարոյն հետ հաս յաւարս
Սէրն. և՛ առաջին մըտածմանն հետ այն ան-
գո՛ւթ»

Կորսւ հաւատն: Այդ ըզգըլմում, արեւ-
ցում,

Սէրն այդոթի՛կ են. զայն արդ զո՛ւր որոնեմ
Այն առաջին համարոյն ունյաք, անպատում,
Յիւր թեւս հրեղէն շիջոց, հեղձոց զՍէ՛րն
անգիւտս:

Օ՛ր մ՛ալ, ոսկեակ հաւ հղաթեւ ի ձեռին,
Երգէր տէրտէրն. «Անհիւթական աղաւ-
նի...»

Աչքս յաղանեակն յառեցաւ, ապա հեռ-
Միտք իմ սրտեալ հարցանէր. «Ո՞ր
անհիւթ...»

Եւ շըրջեցաւ միտքս ընդ համայն տիեզերս.
Յաստեղատունս, ծովուց ի խորս, յայերս,
յալս,

Համայնուրեք՝ մի՛նչ անհունին ի յեղերս
Յածեցաւ նա, համայնուրեք զըտաւ Նիւթ...:

Եւ խորհեցայ միշտ. գիժք նըսեմ ճակատունս
Յայտնեն զխորհուրդս, մատնեն զտազնապս
իմ մըտաց:

Կեանքն ըսկըսէր ծանրանալ յոյժ, յոյժ յիմ
ուս,

Տեսեալ զի չի՛ք ինչ ճըշմարիտ բան զփոշի...:

Հըրապառ արեւ զարթունէ զգայարանքս,
Եւ երազեմ ձերմակ, վա՛րդ միս, սե՛ւ աչքեր,
Ճաշակելով կանխաւ եւ՛ զցուրտ ըզյափրանքս
Եմ անասուն, — զիտակցու թիւն ըսպանի՛չ...:

Տաճարք խընկեալք, գոհարափայլ առբք
սեղան,

Աղօթափայրք օծեալք հոգւոյն հուր ուխտիւք:
Իրեւ մարմար կամաղնիւ փայտ արժեն միայն
Յաշ իմ, և կամ իբր արուեստի գործ չըբեղ՝

Զի՞նչ են դօբա... նիւթ. Եւ լիցին զի՞նչ... փոշի
Միածանին գոյներն ամեն եւ երանգք,
Բոլոր մարմինք, բոլոր թեւեր, լանջք կուսի,
Ի միակ գոյն, ի միակ նիւթ տըրտմատես

Վերածեսցին — ի գոյն միտքոյ, ի փոշի...:

Ե.

Այսպէս եւ նա, երիտասարդն տըրտմայուն
Զոր կորուսիքն այնքան, ո՛հ, վաղ, զոր ինձի
Համեմատես — եւ իրաւամբ — ո՛ր թէրքեան

Այսպէս փոխադրուելով խորհրդարանի հոգով
ապա :
Թերեւս եւս սուրբ եւս՝ մօտ իսլամ պատան-
ւոյն ,
Գինեւոյ , կընով գերեցեալն այն փոխադրու-
Այլ մտածուին նոյն՝ առնէ զմեզ նոյն ե
մի . . . :
Ըզտեւական , զորմէ , վարպետ պաշտեց-
եալ ,
Ի վրեժով դասս ինձ խօսէիր էր երբեմն ,
Ըզտեւական ոչ գըտանել յուսամ ա՛յլ .
Վա՛մ մանաւանդ կորուսի զայն , վա՛հ , ան-
դարձ . . . :
Ե . ՏԵՄԻՐԻՃԻՊԱՆԵԱՆ

ԺՕՐԺ ՏԸ ԲԱՐԻ

Ա.

Իւր յատուկ անուններն են Տփղիսի Բա-
ղամիւսի զորքն եւ Հասարակաց Գործակա-
նութիւնն ի բերան կը շրջի ժօրժ Գործակա-
նութիւնն անունն Ընդհանրացեալ , տարած-
ուեր են իւր եկամուտ անունները ժողո-
վուրդի մէջ . բայց ո՞ր ժողովուրդին ի հար-
կէ չեմ անկարկեր մի միայն Տփղիսեցիներ-
ուն , այլ համայն Ռուսահայոց :
Ուստի՞ եկած է ժօրժ տը Բարի . ե՞րբ
ծնած է . ո՞չ որ կրնայ պատասխանել Պահ-
մը կը թուի թէ նա իւր Բաղամիւսի ան-
ունակոյնութիւններէն քառասուն դար յե-
տոյ ծնած է , այսինքն թէ իւր հոգին շատ
հին է , 7000/ն ծնած է կամ 0007/ն , բայց
ոչ որ գիտէ : Նախապատմական մարդ է ,
անդր-ճիւղեղեղեան արարած մը , կ'ըսեն
գիտնականներն : Իսկ եթէ մեր նախապա-
շարեալ մամիկներուն առջեւ հանես զայն ,
իսկոյն կը գոչեն ճա՛հ , գոռոզ տանի սը-
ւիկայ , խորդլախ է , ինչ է , այդ սատանան ,
հեռու տարէք , հեռուէն :
Բայց եթէ հեռուն տանիս եւ եթէ չի
տանիս , Բիշոփ Է , Բիշոփ Է , իւր բը-
նածիր յատուկութիւնն է այս : Շատ մեծ սը-
խալ չպիտի գործեմ եթէ ըսեմ որ նա մարդ-
կային այնպիսի տաղանդաւոր մ'է որ կրնայ
լինի ուր որ կամի , կամ երբ եւ կամի կըր-
նայ ամենուրեքեան չինել ինքզինքն : Օր մը
ժօրժ տը Բարին է զոր գուցէ ի Բարիզ
գտնես . որ մը Տփղիսի Թափառաւորիկ
որդն է՝ որ գուցէ Տփղիսի փողոցներուն
մէջ հանդիպի ընդ , եւ որ մը հասարակաց Գ-
ործակա՛ն է , որ կերթայ գտնել իւր կարծեց-
եալ հայրերն : Պըտոյ կլիմային նման միշտ
փոփոխական է : Կը պատմեն թէ՛ 77-78ի
պատերազմին բանքեր էր Լազարէֆի եւ
Տէր Ղուկասովի միջեւ , եւ աւանդութիւն
է թէ առաջին մեծ պատերազմին տեսնե-
ալ նոյն պաշտօնը կը կատարէր Նելսէն
Աշտարակեցիին եւ Հ. Գ. Բիշոփ , եւ ժո-
ղովուրդն առանց զժողովուրդեան կը հա-
ւանայ թէ Քրանքո-ալմանական պատե-
րազմի միջոցին ալ Նարոյնի եւ Մուլլի-
միլի եւ բանտար էր Անցան այս ամէն զէպ-
քերն եւ նա կ'ապրէ՝ դեռ : Իւր թեւերն իւր
ոտքերուն ներքեւն են , երբ եւ կամի կը
պարզէ զանոնք եւ կը թռչի , կը խոյանայ :
Բայց ո՞րքա ի Բարիզ անտի ի Լոնտոն . կար-
ծես կայք չունի իւր չորեկապը : Վերա-
դարձ ի Բարիզ ինչո՞ւ : Գուցէ ներքին կամ
արտաքին հով մը մղելով զնա անդ՝ ձը-
գեց կամայ ալիմայ : Իւր խորհրդաւոր

զիմակառութիւնն իւր հանապազօրեայ գոր-
ծառնութեան զեկն է :
Միջազգային սուրճանդակ մ'է թէ հան-
րային կամ անհատական լրատար մը : Զգի-
տես : Միայն թէ երբ խօսքի բռնուի մէկ
մէկ բան կը պատմէ Պիգմալոնէն ալ , Կլա-
տըստէն ալ , Կամպէզդայէն ալ , Կորչա-
քոֆէն ալ , Տոնտուքոֆէն ալ , Լորիս Մեղի-
քոֆէն ալ , Պարսից Շահէն ալ , Խրիմեանէն
ալ , վերջապէս Մակարէն ալ :
Մակարն . Մակարն (շեշտելով միշտ) իւր
նախաբանն է եւ վերջաբանը : Միշտ կը
մոռնայ Մակարն եւ միշտ վրան կ'լինայ (կը
յիշէ) : Իւր տեսակցութիւններն , չգիտեմ
ի՞նչ առթիւ , ուստի ժեշտեցանք հետ ա-
մենէն հետաքրքրական մասն են իւր կեան-
քի պատմութեանն :
Բովանդակ Տփղիս որ կը կարծէ ճանչել
զայն՝ իւր Գործի կամ Գործիչին համարելով
— եւ ի մտոյ ծանօթ լինի նորա անձին եւ
անձնականին , երկու կարծիք ունի : Մաս
մը կայ որ կ'ըսէ թէ ժօրժ տը Բարի խեղդ
մ'է՝ մարդկային առեղծուած մը : Ուրիշներ
ալ կան եւ մեծամասնութիւնն է , որը հա-
մոզուած են թէ նա խելացի , զգայուն եւ
աւելի ազգասէր է քան մեր կեղծ ազգա-
սէրներ : Շարք մը գաղանիքներու բովան-
դակութիւնն է , այլ ոչ ումք կը բանայ իւր
գաղանիքն : Անոր ամենամտերիմը լինել կը
կարծես . կը տեսնուիս նետը , կը խօսակցիս
երկար , պահ մը ետք յորում դադարած կը
լինի ձեր խօսակցութիւնը , կը կարծես թէ
գաղանիք մը կորցած ես , այլ ոչ , զի ինչ որ
նա ներշնչեց , նա ընդ միշտ գաղանիք մ'է
եւ գաղանիք կը մնայ քեզ համար : Բայց նա
կորած է այլ եւս այդ տեսակցութեանն
ետեւ : Այնչափ զգածուած ես որ նորէն
կ'ուզես անսնել զինքն , վերստին ներշնչուի
իրմէն , բայց ո՞ր պիտի գտնես զնա : Գը-
նաց , կորա՛ւ , սողաց , գուցէ Մակար Կա-
թողիկոսի առաքաւորին ներքեւ , անկէ ալ
գուցէ նորա վերադարձն տակը :
Օր մը երբ իրեն հետն էին այսպէս ը-
սաւ ինձ նա շեշտելով .
Ա՛յա Մակարն , (այս տեղ միքանի դառն
ակնարկութիւններ) շատ կը սիրեմ ես ան-
հատապէս զնա . . . բայց սիրեմ թէ ատեմ ,
ատեմ թէ սիրեմ , վերջապէս ինչ որ ալ ը-
սեմ , անոր սուրբ վեղարին հովանին ինձ
համար շատ ապահով օր մ'է . . . ըսաւ ինձ
այս խօսքն որ որչափ տրամաբանական
նոյնչափ ալ այլաբանական էր , եւ կորաւ
նոյն իսկ այն վայրկեան յորում ապառ-
գեւ կը դիտէի իւր հետաքրքիր զիմադի-
ծը : Նա գնաց , իսկ ես մնացի միայնակ
այն ճաշարանի մէջ , որ կը գտնուի Թափառ-
մեծ պառնի մօտ ջրի գործարանին ետին :
— Ինչ եղաւ այդ մարդն , հարցուցի
հետաքրքրութեամբ ճաշարանին տիրոջ Պ.
Նալբանդեանցին , որ Վանեցի մ'է . ո՞ր
գնաց այդ զիմակաւորն :
— Նորա յանկարծ երեւիլն եւ անհետ
լինելն այնչափ սովորական դարձեր են մեզ
համար որ երբեք չենք հետաքրքրուիլ զիտ-
նալ թէ ո՞րտեղէն կուգայ եւ ո՞ր կը կոր-
չի , պատասխանեց ինձ լրջօրէն :
Մտախոհ թողի ճաշարանն եւ միամտա-
բար կը կարծէի հետեւիլ նորա հետքերուն
զոր Տփղիսի յոգնախառն ամբոյն աւրած
էր , եւ պարզմտօք էն կը կարծէի գտնել զինքն
մարդկային այն այլադան ժողովին մէջ որ
Կովկասի կառավարչապետին ընդարձակ փո-
ղոցը կը լնուր առաւօտէն մինչեւ երեկոյ ,
երեկոյն մինչեւ առաւօտ :

Բ.

Օգոստոսի 16ն էր 86/ն : Աշնանային մեղա-
մաղձոտ օր մ'էր . Աղբաթափայի կայարանն
էինք : Երկաթուղիի առաջին կայանը կը փո-
խադրուինք անգլիացի ուղեկցիս հետ , մեր
բոլոր գոյքերով : Մեր տոմսերն գնելու ըզ-
բաղուած էի : Մի մարդ , որոյ երեսը միայն
մանրագնին նկատելէ ետք ճանչցայ թէ
մարդկային տիպար մ'էր , ականջս ի վար
փափսաց :
— Ո՞վ է այդ voyageurն , (ճամբորդն)
հարցնելով լակոնական շեշտով մը , եւ ա-
ռանց սպասելու իմ պատասխանին , հետա-
քրքրութեամբ սկսաւ զննել զայն . յօտից
ցլուլու : Այնչափ նրբօրէն կը հետաքրքրէր
որ տեսնողը կը կարծէր թէ լրտես մ'էր նա :
Երկու րոպէ յետոյ դէպ ի ինձ դառնա-
լով ըսաւ . — Ուղեւորին անգլիական հա-
սակն , որ ուղղահայեաց եւ ձիգ է եղեւնի
ծառին նման , ինձ յիշեցնում է այն խոլ-
Վերդիլի ծառն՝ որի ըով երկու անգամ չունջ
առած եմ . . . : Նորա կաշեայ վանկապանն ,
զրահաւորուած փոքրիկ եւ կլորակ կոճակ-
ներով , նորա ճանապարհորդական խիժէ կո-
չիկներն , որը անգլիացիներին միայն յատուկ
են , եւ հասարակ չալէ գգակն զիս շատ
հետաքրքրում են : Եթէ ասեմ պարզ ճա-
նապարհորդ մ'է դա , կը խարուիմ , իսկ ե-
թէ ընդունիմ թէ լրտես մ'է , նոյնպէս կը
խարուիմ , որովհետեւ մեր հիւսիսային հզօր
արծուն աչքերն այնչափ հեռանկատ եւ
չըմհայեաց են , որ գրեթէ կարելի չէ եր-
բեք չտեսնեն այսպիսի օրսերը : Բայց ինչ որ
ալ լինի , ո՞վ է այդ ուղեւորն , խնդրում եմ
ինձ ասեցէք , հարցուց երկրորդ անգամ :
— Ինչո՞ւ է այդ հետաքրքրութիւնն , յա-
րցի :
— Այնչ , միայն ուզում եմ իմանալ թէ
ո՞վ են այդ եւ ազոր նմաններն , ինչո՞ւ
համար ման են գալիս մեր հողումը : — Իւր
խօսքերուն մէջ կը խառնէր միշտ Ռուսա-
հայերին Տաճկահայերի բարբառն , թէպէտ
շատ անգամ ալ Քրանսերէն եւ Ռուսերէն
բառերն : Եթէ իւր հայկական զգացումներն
չլինէին , օտարազգի մը պիտի դառնէի
զինքն :
— Անոնք պատելով Տաճկա-Ռուսահա-
հայաստանն ի՞նչ վիճակ կրնան տալ հայ ժո-
ղովուրդին , հարցուցի հետաքրքրել ուղեւոր
օտարականին օտարափայ հայեացքներն :
— Այդ խաբարայ անգլիացիներն յայտնի
զուգադիսութեամբ մը երեւան եկան եւ
միջազգային ատեանը պաշարեցին այն հզօր
առիւծին հետ եւ ո՞վ գիտէ ինչ թակարդ-
ներ կը լարէ այսօր ալ մեր երկրին համար ,
որի բնիկներն իրենց վաղեմի թոյլ մեղկա-
սիրութեամբ քիչ թէ շատ համբաւ ստա-
ցած ժողովուրդներն են : Մեզ համար դա-
տաւճիւնները զանազան էին այն օրը , ժո-
ղովի մէջ ամեն նստողը մէկ տեսակ վճիռ
կ'արձակէր մեզ դէմ : Ամենէն աւելի անգ-
լիացիներն էին , որ իրենց կեղծ ու պատիւ
խօսքերով մեր ուշը գրաւեցին : Դուք մեր
պաշտպանեալն էք , ըսին մեզ :
Այն օրուինց ցայսօր անգլիացի դորձա-
կալներ , շահախնդիր ուղեւորներ մեր գիր-
կը կը մոռնեն , կ'եւնեն , կը հետաքրքրին , եւ
ինչ որ գտնեն թանկ , անգին , հնութեա-
կան եւ մեծագնի՝ առնում , տանում են :
Անոնք պատճառ եղան մեզ , որ մեր ամեն
մէկ գործում աչք կը տնկենք մարդահա-
ճոյ Եւրոպացիներին վրայ . . . : Մի խօսիլ
երբեք ուղեկցիդ (զիս խրատել ուղեւոր)
հայկական սրբավայրերի , նախապաշարում-
ների , երգերի , գողթան երգիչների , բա-

նախադրութիւններն, մեր պատմական անցեալին, հնաւանդ յիշատակարաններն, մեր նշանաւոր գործիչներն — Ն. Աշտարակեցիին եւ . . . ին վրայ: Անոնք թող կենան միշտ մեր մէջ իրրեւ թաղուած գտնաւեր: Մանուկներն կերակուրը խոզերի առջեւ մի՛ ձգերք . . .

Այնչափ փոփոխ էին անձանթին դէմքն եւ լեզուն, որ չէիր կրնար որոշ նպատակ մը գտնել իւր մէջ: Պահ մը կը խօսէր իրրեւ բանաստեղծ — եւ կ'երգէր անդին դիւցազներգութիւնները . . . Պահ մը իրրեւ կենդանի պատմագիր մը — եւ ինչ անձանթ պատմութիւններ չունէր . . . Պահ մը իրրեւ աշխարհագիր մը՝ իրրեւ պերճախօս մը . . .

Շրթերուսի մեկնման առաջին ազդարար սուրմն կայծակն պէս ցնցեց զմեզ մեր բանախօս, պերճախօս գիտականորին եւ խօսքերն ընդհատեց: Կը պատրաստուինք մեր շարժուն եւ մնայուն օթեւաններուն մէջ ծրարուիլ զգեցիցին հետ: Մինչ այս մինչ այն՝ անձանթին անհետ եղած էր . . .

40-50 տարեկան եւ վայելուչ հասակով մարդ մը կը թուէր անձանթին: Իւր խառնախոյր զիմազիծէն չէիր կրնար որոշել նորա որ ազգին պատկանիլը, սակայն մաքուր հայերէն մ'ունէր, որով կը մտնուէր խառնուած կամ ռամկորէն հօն մազերն անհոգութեամբ փռուած էին ճակտին, պարանոցին եւ ականջներին վրայ: Աչքերի ականապիւն կ'ակօսէին նուրբ, խիստ նուրբ, եւ արիւնացայտ երակները: Անոնք բացորոշ նշաններ էին իւր ներքին մտահոգութեան: Հին ճերմկած ասուիէ փեղոյրի մը մէջ, յատուկ այսպիսի քողարկեալ թափառաշրջիկներն, թաղեր էր իւր բազմախոս զրուան: Քանի մը ծուէններու բաժնուած վերարկուն տակ կ'սքօղէր իւր իրանը, իսկ ոտներն իրենց հետ կը քաջըջին արեւելեան կարկանտած կօշիկները: Այս ամենը՝ մէկ մեծ գաղտնիք կը բովանդակէին: Կանակին վերայ կը կրէր պայուսակ մը, լինէր լինելով հայ, ռուս, պարսկ, թուրք, գաղ, գերմաներէն գիրքերով: Մշակ, Նոր-Պար, Ռուսկէ-Կուրէն, Արշալուստ եւ ուրիշ լրագիրներ եւ հանդէսներ մէկ ուրիշ պայուսակի մը մէջ կը կրէր, որ միասին առնելով կախուած էր: Ուզողին կուտար ասոնցմէ ձրի կամ խիստ գիւրագին: Բայց ո՞վ էր այս գիտականորն: Ոչ ոք գիտէ, ոչ իսկ իւր ստուերն:

Գ.

Այլ թողունք շոգեկառքն իւր վերջին կարգին վրայ եւ երթանք խորասուզուիլ այն քաղաքն՝ որ քիչերի կարծիքով Պօլսէն ետքն, սակայն շատերի կարծիքով անկէ առաջ է Հայոց համար: Թիֆլիզ Միխայէլովսի կամուրջին զլուրը կը բարձրանայ հսկայ արձանն Վարանձովի: Կամուրջի միւս զլուրը՝ արքայական պարտիզին գիւնաց «Լոնտոն» հիւրանոցի կանակին մէկ անկիւնածայրը կը տեսնուի մի գրավաճառանոց, այլ ոչ Պօլսի գծուծ գրավաճառանոցներն նման: Հոն ոտքը կը կառչի ակամայ: Կարծես եւ լեկտրականութիւն մը կայ, որ կը քաշէ զքեզ: Ներս կը մտնես, ամերիկեան երեսնասայ բազկաթոռին մէջ խրուած է Պ. Զ. Գրիգորեանց: Օտարոտի բարեւէդ իսկոյն կը մակաբերէ թէ օտարական մ'ես: Երբ մտայ գրավաճառանոցն, սկսաւ խօսիլ Մակարի վրայ, Պալաթէիայի վրայ որոց ջերմ բարեկամն է: Սակայն այս պահուն

թողլով որ նա խօսի, խօսի որչափ կ'ուզէր, ես իմ երազներին մէջ, եւ չուզա կը յուսայի գտնել այն մարդկային առեղծուածն՝ որի կեանքը պատմութիւնն այնչափ հետաքրքրական է:

Քանն օր ետք այն օրէն՝ յորում ոտք կոխեցի Տիգրիսի մէջ, իրիկուն մը արեւը մարը մտնելու միջոցին երբ միջնաղ հորիզոնին կը նայէի, ինքնակող խօսակից մը գիմացս ելաւ, վայելուչ հագուած, նման պատուաւոր վաճառականներին, եւ յարգական բարեւ մը տալուն հետ ըսաւ.

— Կ'երեւայ թէ օտարական մ'էք, ո՞ր տեղացի էք: Ի՞նչ գործով հոս եկած էք, Տիգրիս մեծ ու չալա քաղաք մ'է, այնպէս չէ՞: Բայց փոխանակ աստ կայնելու դիմացի Ֆէֆթան երթանք եւ խօսակցինք քիչ մը, ըսաւ եւ առաջնորդեց զիս մի ընդարձակ եւ գինիի տակառներով լիքն գինեւան մը: Գինեւանէն կը սոսկայի, բայց հնազանդեցայ անդիտակցապէս: Անձանթին տարօրինակ, կցկուտ եւ խառնիխառ հարցումներէն ոչ մէկին չ'զոտատարանելով մեքենայերէն հետեւեցայ անոր մինչեւ մէկ անկիւնն ուրտեղ գերծ կը լինէինք Տիգրիսի գինիներէն:

— Այստեղ նստողներն ամենքն ալ գիծ (խեղ) տղամարդ եր են, ասոնք գոհակ լիքնեք եւ աւաղ-լիքն եւ, որք գինիէն եւ ջարէն զատ ոչ ոք չեն ճանչնար, այնչափ կոյր մնացեր են իրենք որ, եթէ իրենց պետերն ըսեն թէ — Գնացէ՛ք ծով նետուեցէք, ամէնքը կուրօքն կը հնազանդին այս հրամանին: Գրեթէ ուսումնաւոր աշխարհն եւ բանակն ասոնց նման: Ջարին կոյր կամակտարներն են: Այս միայն ուղում եմ ասել որ, հոս ի՞նչ տեսակ խնդրի վրայ որ ուզենք կարող ենք խօսիլ, երբեք մի կապած իր: Երբ ես ուզեմ իմ գաղտնիքն մէկի մը բանալ, այսպիսի տեղերի մէջ կը սողամ, ըսաւ ինձ:

Մէկ կողմէն անձանթին հետաքրքիր տեղեկութիւններն ուսների մասին, միւս կողմէն ալ նորա հրաւերն՝ բանալու ազատ խօսակցութիւն մը, աւելի կասկածոտ ըրին զիս, որչափ չէի ուզեր լինել դէպ ի ինքն, Նորա հայ լինելուն վրայ շատ քիչ կասկած ունէի: Բայց Ռուսահայ մը թէ Տաճկահայ մ'էր չէի կրնար որոշել, որովհետեւ երկու քոյր բարբառներէն ալ միանգամայն կը խօսէր:

— Կը փափաքիմ գիտնալ թէ, ո՞վ էք դուք՝ յարեցի:

— Ես մարդկային առեղծուած մ'եմ, մէկ հոգի միայն ունիմ, բայց կարծես թէ ամենի հոգին ալ եմ . . . Իրրեւ թիւրքերուցումը վստահ լինելով ձեր վրայ, կրնամ իմ գաղտնիքներէն մէկ երկու փշրանք տալ քեզ: Բաղմաթիւ անուններ ունիմ ես: Ժօթ Կը Բարէ կը կոչեն զիս: Ի՞նչ ըսեմ, Հասարակաց Կրթիչ, Տիգրիս Բաժնաւորէն Կրթ Եւ, Եւ: Եթէ առիթ ունենամ, օր մը պիտի ծանօթացնեմ քեզ ասոնց ծագումը: Գրեթէ ամբողջ Գերմանիա, Ֆրանսա, Աւստրիա, Կովկասն եւ Անգլիոյ վրայ կը ճանչնան զիս:

— Ուրեմն, դուք այն մարդն չէ՞ք, որ մի անգամ Պ. Յ. Նալբանդեանցին ճաշարանն հանդիպեցաք ինձ:

— Այո, այո, ոչ միայն այն, այլ նաեւ ցնցոտիներն ներքեւ ծրարուած այն օտարական գրաւաճառն, որ հանդիպեցայ ձեզ Ալլաթաֆայի մէջ: Այն օրը Մակարի բովէն կը գալիր: Շատ անգամ այցի կ'երթամ իրեն . . . Յնցոտիներս իմ գաղտնագիրութեան յայտնի յատկանիւն են: Ոչ ոք կրնայ ճանչնալ զիս՝ երբ անոնց ներքեւ կը

պահուցուիմ: Իմ ծագման մանրամասնութիւններն շատ տարօրինակ են, (ուրիշ տաճիկ կը պատմեմ): Ամեն օրուան յատկացեալ դէմք մը եւ հագուած մը ունիմ: Կիւքակէ օրերին հագուածս ու կապուածս մանաւանդ ամենէն խորհրդաւոր են: Իմ այցելութեան նպատակը կը ինքներին քոյր ուրիշ գաղտնիք ունի, ազգ. դրագէտներին ուրիշ, աղքատներին՝ ուրիշ, հարուստներին՝ ուրիշ, հայ պաշտօնատարներին՝ ուրիշ, խառն խառններին եւ ուսուցիչներին՝ ուրիշ, հին եւ նոր երիտասարդներն եւ համալսարանականներն հետ ուրիշ: Իմ կոչումը՝ միշտ մի եւ նոյն է, միայն այլ եւ այլ առթիւ կը տարբերին իրարմէ իմ այլազան նպատակներն: Իրեւ ժէնէրալներն օֆիցէրներն խառն բերին մէջ կը մտնեմ, կ'ելնեմ, ազատ համարձակ, անոնց հետ ուտելու, խմելու եւ զուարճանալու համար հազար ու մէկ հանգըներ ու զուարճութիւններ կ'ընեն: Բայց պէտք է գիտնալ որ, որչափ զուարճացիչ են, նոյնչափ ալ այլաբանական եւ երգիծաբանական՝ իմ շինծ կատակներն . . . Որչափ անհուն կը լինուրախութիւնս, երբ այս նպատակաւ խաղերիս հետ կը խառնեմ մեր ժողովրդական բանաստեղծին սքանչելի հագներով քանի մը տղերք . . . Խեղճերն՝ այնչափ միամիտ են, որ կը կարծեն թէ դեռ կատակներ կ'ընեն:

Այլ յաճախ, այլ ստէպ Մակարին վերադառնալով կ'ըսէր. — Ինչ կը խորհրդաւոր Տաճկահայրդ, Կաթողիկոսի վրայ: Ռուսահայերէն մեծ մասն՝ այլ կերպ կը խորհրդաւոր . . . Մենք անոր գլխովն կ'երգենք միշտ . . . Գիտէ՞ք թէ ի՞նչ է Խեղճիկ կը լարուին Էմմաճի պարիսպներէն ներս: Իւր վերարկուն տակ, իւր վերարկին ներքեւ . . . Ահ, գիտե՞ք թէ ի՞նչ տնայտագրահալէթի մը բերան կ'առաջնորդուի ալ գը . . .

Անձանթին արգահատալիք եւ ազաներն չուսներն այնչափ սոսկում ազդեցիկ վրաս, զորս ստիպուեցայ ընդհատել հակառակ իւր կամաց: Ո՞րքա, գուցէ լրտես մ'էր կը մտածէի: Արգահատեցաւ վրաս անձանթին որ այնչափ յանկարծակիի եկայ Ռաֆֆի Կայծերն եւ Էմմաճին վերնագրով մատենին ձեռքս մէջ հրեց ստիպմամբ, — Մի՛ վախճար, ես լրտես մը չեմ եւ մի մոռնար այն հանելուկն, որ իմն է որ իմ հեղինակութիւնն է, եւ որ իմ կոչման միակ բացորոշ յատկանիւնն:

— Երբ Պ. Արիկարը կը տեսնես՝ պատեմ օտթիւ մը, իմ բարեւներն յիշէ անոր իմ կողմանէս, . . . ին սուրբ աջը համբուրէ:

Այս եղան իւր վերջին խօսքեր, եւ ձեռքս սեղմեց այնպիսի տխուր տպաւորութեան մը ներքեւ, որով կարծես հասկնալով կ'ուզէր ինձ թէ զուր տեղ կասկածներ էի իւր վրայ: Յուրա ջլաճգում մը զգացի այն վերջին րոպէին, յորում տեսաւ կաթիլ մը արցունքի մեղմ հոսումն իւր աչքերի մէջէն:

— Ինչ առեղծուած, ինչ մեծ գաղտնիք ըսի, զղջալով միշտ վեհերոտութեանս փայլ որ չկրցայ ուրիշ գաղտնիքները, թանկագին քաղաքները կորցել իրմէն:

Ժօթ Կը Բարէն անհետ եղաւ, իւր ետեւէն տանելով Տիգրիս Բաժնաւորէն Կրթ եւ Հասարակաց Կրթիչին: Իմ ըով մնաց միայն իւր հանելուկն, իւր կոչման երկսայրի յատկանիւնն: (*)

ՍԻՄՈՆ ՅՈՎ. ՆԱԵՆԱՆ

(5) Ժօթ ալ Բարէ Պօլիս եկած է: Ինչպէս իմ կարծեմով զիս կովկասցի ազնուական մը ճաշը հրաւիրած եւ սիրալիք ընդունելութիւն քրտած է, բայց յետոյ ինչպիսի առիթ ունեցած է: Մ. Խ.

ԿԱԶԻՆԱ

Վերջին ժամանակներս համարն աշխարհի աչք յառեալ են դէպ ի Չարին արդի բնակավայրը, վասն զի հոն կեդրոնացած է այժմ ապագայի գաղտնիքն, այդ բնակարանէն պիտի ելնէ պատերազմ կամ խաղաղութիւն: Դեկտեմբեր մէջ անցած զարմածներուն վրայ շատ խօսուեցաւ, սակայն ցարդ ոչ որ ծանօթութիւններ հաղորդեց բնակարանին վրայ: Եւհեկանութենէ զուրկ չեն ուրեմն բանի մը տեղեկութիւնները(*) զորս հաղորդած են Ռուսիոյ կայսերական գերդատանին ծառայութեան մէջ զբաղուած անձինք:

Կաշինայի զգեստը կառուցուած է Չարբօէ-Սէլէյ եւ Քրասնօէ-Սէլէյ երկու տարնային բնակարանաց մէջտեղ, մինչեւ Ալեքսանդր Գ. Կայսեր գահակալութիւնը շատ բիշ կը խօսուէր անոր վրայ, ամենէն աւելի ծանօթ էր արտական շանց տեղին, ի Կաշինա, որ համբաւուր էր երբ Նիքոլայ Կայսրն իւր արքունականէնէ միայն համակրութիւն արտայայտելու գէտ, Կաշինայի վոհմակէն շուն մը կը նստիւրէր նմա: Արդի զգեստը կառուցուեցաւ ձեռամբ Մեծին Պետրոսի որ տուաւ զայն իւր Նաթալի բրօշ: Քաղէրին Կայսրուհին եւս նըւիրեց զայն Օրլովի որ բազում փոփոխութիւններ ներմուծեց անդ, երկու կողմնակի շէնքեր աւելցուց եւ Ռինալտի անուն իտալացի ճարտարագետը կոչեց զգեստին ներքին կողմը զարդարելու համար: Իշխանին մահէն յետոյ, Կայսրուհին վերստին գնեց զայն եւ Պողոս Մեծ-Պետրոսի տրամադրութեան ներքեւ դրաւ, որ բազում տարիներ անդ բնակեցաւ: Ապա, զգեստը երեսի վրայ թողուեցաւ եւ շատ բիշ անգամ կը բնակէին անդ:

Կաշինա երկար քառակուսոյ մը ձեւն ունի եւ երկու անկիւնները մէկ մէկ աշտարակ կը բարձրանան: Երեք յարկ ունի որոց առաջինն յենած է մարմարեայ կոթողներու վրայ: զգեստին ներքին կողմը աչքի զարնող բան մը չունի, այլ սովորական չէնք մ'է ամէն զգեստներու նման: Սակայն բանի մը տարիէ ի վեր Կայսրուհին նկարներ բերել տուած եւ անդ փոխադրած է միւս պալատներու կարասիները: Դեկտեմբեր շրջապատող զարաստանն սքանչելի կերպիւ զարդարուած է, արդէն բնութիւնը մեծապէս զիրարացուցած է արտափայլանաց գործը: փոքրիկ գետակ մը եւ երկու լճեր կան զարաստանին մէջ որ որմով չբազաւտեալ է: Դարաստանին ծայրը գտնուող պուլակն եւս շրջափակուած է, հինգ տարի առաջ ձեռնարկուեցաւ այս աշխատութեան որուն համար ահագին դուրմարներ վատնուեցան:

Աւելորդ է ըսել թէ զգեստին մէջ եւ զարաստանին շուրջն ամենախիստ հսկողութիւն մ'ի գործ կը գրուի: Կաշինայի յանգող ուղիներուն վրայ շարունակ պահակներ կը շրջին՝ անցորդները կեցունելով եւ անցագիր հարցունելով: նմանապէս հսկողութեան ներքեւ է երկաթուղոյ կայարանը, թէպէտ արքունեաց պիտոյից միայն կը ծառայէ: Այն անձինք որք կայսերական զգեստակի ծառայութեան մէջ չեն, չեն կրնար Կաշինայի կայարանէն չողեկառք նստիլ եւ

ոչ ալ անդ իջնել: Դարաստանին որմին շուրջը շրջապատող կառուած են պահակներ՝ իրարմէ քսան-հինգ մեզր հեռաւորութեամբ կանգնած, որք ժամը մէկ անգամ կը փոփոխին որպէս զի չթերանան իրենց հսկողութեան մէջ: Դարաստանին եւ զգեստին մուտքը ներքի չէ, նոյն իսկ պալատան սպասաւորաց եւ կայսերական դիւանին պաշտօնէից, եթէ ցոյց չի տան մտից տուն մը որուն գոյնն ութ օրը մի անգամ կը փոփոխի: Բաց աստի, զգեստը բնակող անձանց արգիլելու է, ինչ աստիճան ալ որ ունենան արքունեաց մէջ, իրենց դուռները գոցել գիշեր ու ցերեկ: Կայսերական բնակարանաց ընդհանուր վերակացու Ռիսկէր զօրավարն եւ ազատութեան պետ Չէրկովին զօրավարն իրաւունք ունին ամեն խուցերու մէջ խուզարկութիւններ կատարել երբ որ հարկ տեսնեն:

Այսպէս զգեստին ամէն միջոցը ձեռք առնուած են: Հսկողութեան գործն աւելի եւս զգեստարացած է այն պատճառաւ որ զգեստին հարերը չտեսնելու կը զարնեն օտարականութեան ներկայութիւնը: Չարը կը հաճի որ իւր անձին ազատութեան հըսկեն, սակայն ոչ մէկ կերպիւ կ'ուզէ զբոհուիլ իւր սիրելի զուարճութիւններէն՝ պտույթ, որս, ձկնորսութիւն եւ նաւարկութիւն: Յաճախ առանձինն կ'երթայ ման գալ զգեստին կից պուլակին մէջ եւ պատահած է շատ անգամ որ Ն. Վեհափառութեան հետեւող օտարականութեան գործակալը դաւադիրներ կարծուած են: Կայսրուհին որուն սիրտը երկիւղով լի է միշտ, երկու երկար ձեւակիւններ կառուցանելուած է եւ անոնց մէջ լեցուցած է ամեն ինչ որ կրնայ զրօսանք պատճառել Չարին: Երկար պաշտատանքներէ յետոյ, խոստում առած է Կայսրէն թէ այդ ձեւակիւններուն մէջ պիտի չընդգայի, զէթ օդն անձրեւոտ եղած ատեն:

Կայսրն ու Կայսրուհին յաճախ կառքով կը շրջագային եւ կամ կ'երթան քանի մը ժամ անցունել ի Բեդերսպուրի որ 10 բլրակեղր հեռաւորութիւն ունի Կաշինայէն: Անդ եւս Չարը չուզեր զինուորական հետեւորդներ: Ալեքսանդր Գ. վերջին անցից միջոցին զարմանալի քաջութիւն եւ պաշարիւնութիւն մը ցոյց տուած է: Գրեթէ ամիս մը առաջ տեսած են զՆա որ մայրաքաղաքին նեղ փողոցներէ մին այրող հրդեհի մը միջոցին բաղմութեան մէջ խառնուած էր: Այդ վտանգաւոր արշաւանաց միջոցին Ն. Վեհափառութեան ընկերացող թիկնապահն յաջորդ օրը կ'ըսէր. «Լաւագոյն կը համարիմ անցնիլ փողոցէ մը որուն երկու ծայրը թնդ անօթներ զրուած լինին քան այդ բաղմութեան մէջ խառնուիլ»:

Կաշինայի շուրջն ամբողջ բանակ մը կայ եւ ուղեւորն երկաթուղիով այն կողմերէն անցնելով չպիտի ուզէ հաւատարմութէ պարտական անդ համակրութեամբ է միակ մարդ մը պահպանելու համար, 240 միլիոն հսկայական պէտքերով եւ սակայն ճշմարիտ է այս: Չարն հարկադրեալ է փոքր զգեստի մը մը բնակիլ, լերկ դաշտի մը վրայ կառուցուած, զգեստի մը որ բնաւ պատմական անցեալ չունի եւ որ ճանաչի ոչ Վէրսայի, ոչ Վինտորի, ոչ Սքեօնպրիւնի, ոչ Բօդապոմի, եւ այս ամենն այն պատճառաւ որ խումբ մը մոլեռանդներ ոչ մէկ ոճրագործութեան առջեւ կ'ընկրկին հասնելու համար նախատանկի մը որուն բոլորովին ցնորական լինելը գիտեն: Ռուսիա կը սիրէ իւր Կայսրն եւ քանի մը յիմարներու գործը չէ ամբողջ ժողովրդեան մը զգացումները փոփոխել տալ:

Մասիի 3866 թուոյն խմբագրականին մէջ Մեղանիայի համար եղած յիշատակութեան մը առթիւ դիտողութիւններ կը լինին մեզ թէ՛ խիստ քննադատութեան ենթարկելով մեր աշխատակիցներու յօդուածները, պատասխանատուութիւնն ալ ամբողջապէս մենք կ'ստանձնենք:

Հարկ կը համարինք պատասխանել թէ մեր մէջ կան այնպիսի հրապարակագիրք ինչպէս են Չերազ, Տէմիրճիպաշեան եւ այլք — զժողովրդարար ոտակաւորութիւն, որք արդէն կարող եղած են հեղինակութիւն ձեռք բերել եւ իրենց դրամներու պատասխանատուութիւնն ամբողջապէս ստանձնել:

Մեղանիա այս խումբին օտար չէ, եւ մանաւանդ իւր իգական անունը կը հարկադրէ զմեզ միշտ երկիւղած լինիլ իրեն հետ: Ինչ որ ըսած էինք, պարզ ենթադրութիւն մ'էր մեր միտքն աւելի լաւ բացատրելու համար: Բայց ենթադրութիւնն ենթադրութեան սահմանէն դուրս չենք ելնել:

Իրմիւրէն մեզ կը հաղորդեն թէ՛ հանգուցեալ Սըվաճեան՝ Սըլաւոյի խմբագիրն էր բայց ոչ պատասխանատու տէրն, եւ թէ զատաստանի ենթարկուողն ոչ թէ ինքն այլ իւր եղբայրն էր Միւրական Խաչիկէն: Թակայ լինելով՝ իւր մահուան պատճառն այդ հիւանդութիւնն եղած է:

ԿՈՎ ԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Նախիջեւան գաւառի ՅՂՆԱ գիւղից մեզ գրում են: «Այստեղ այժմ խօսակցութեան նիւթ է դարձել մի արտասովոր դէպք, որը պատահեցաւ նորերումս. այստեղացի մի մարդ, Գրիգոր անունով, իր կնոջ հետ միասին սենեակում պառկած ժամանակ, գիշերը տեսնում է, որ իրանց տան վրա քար է քցում, սարսափով վեր է կենում, բայց ոչինչ չէ գտնում: այդ բանը կրկնվում է միմեանց վրա շարունակ հինգ գիշեր: Վեցերորդ գիշերը նա տեսնում է, որ իրեն թէ աւաղակները կոտորում են իրանց տան դուռը, ներս են թափվում եւ ուզում են կողոպտել իրանց: Կրկին սարսափած վեր է կենում տանէքն, և սկսում է գոչելով սենեակի մէջ փնտռել գողերին: Նրա աղմուկից արթնանում է կ'կնոյն և օտար վրա կանգնում: Մարդը սենեակի մէջ այս ու այն ունի կողմ վազելիս՝ յանկարծ գիպւում է կնոջը և կարծելով թէ նա է գողը, բռնում է և սկսում է խեղդել: Կնոջ աղաղակից հաւաքվում են հարեւանները. և հէնց որ դուռը բաց են անում, տանտէրը գժվածի նման դուրս է վազում, իրեն թէ գողի ձեռքից աղատվելու համար, և առանց ըդգալու թէ ո՞ր է դնում՝ ահագին բարձրութեան պատշգամբից ներքեւ է ընկնում, — բայց ոչինչ վնաս չէ ստանում: Կինը այժմ հիւանդացել է երկիւղից: Դրանով չէ վերջանում այս զարմանալի դէպքը: Միւս օրը՝ այդ Գրիգոր կոչվածը, խեղացնորի նման դուրս է վազում փողոց, և հանդիպում է այնտեղ պատուաւոր գիւղացիին: Ինչ մէկին, ուղղակի վազում է՝ գէպի նըրան, առնում է նրա ձեռքից փայտը, և սկսում է ծեծել նրան գոչելով. «Դու չէիր որ մեր տան վրա քարեր էիր քցում, դու չէիր, որ երէկ գիշեր ուզում էիր իմ տունը կողոպտել»: Կուէի մէջ խռնվում են բա-

(*) Այս յօդուած, փարիզի լրագրերէն առնուած, հրատարակուած էր նաեւ «Լա թիւքքի» շէրքին թիւերէ միոյն մէջ:

բեկամները, և ահագին կռիւ և սպանել է բարձրանում: Ահաբայէս հասարակութեան պատուաւոր անձինք, այդ տարօրինակ երեւոյթը պարզելու համար հաւաքուում են, ընկուում են, և տեսնում են, որ խառնաժայռը բոլորը Գրիգորը երաւի մէջ է տեսել:...

—Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ կովկասեան կառավարչապետը Կովկաս գալը յետաձգեց անորոշ ժամանակով, իր ամուսնու ծանր հիւանդութեան պատճառով:

—Պարսկաստանի Ռուսաց նոր դեսպան իշխան Դուրդուրուկին յանձնարարած է, ինչպէս գրում են Մոսկովայի լրագիրները, բանալցութիւն սկսել պարսից կառավարութեան հետ՝ Թիֆլիսից մինչեւ Թէհրան երկաթուղու գիծ անցկացնելու մասին:

—ՇՈՒՇՈՒ մեր թղթակիցը գրում է մեզ հետեւեալը: «Այսօր, մարտի 21 ին սրբազան առաջնորդ Սագինեանց օժեց Ղազան-չեցւոյ նորակառոյց եկեղեցին: Արարողութիւնը սկսվեց առաւօտեան վեցերորդ ժամին և այդ ժամանակից էլ ժողովուրդը սկսեց հաւաքուել: Մօտ կէս օրին ահագին եկեղեցին խիտ առ խիտ լցված էր երկուսեւի ներկայացուցիչներով և այն աստիճան սեղմված էր բազմութիւնը, որ չարժեք անհնարին էր: Մի նոյնքան մեծ բազմութիւն լցրել էր և եկեղեցու բակը, ամենեւին կարողութիւն չունենալով ներս մտնել եկեղեցի: Հանդէսը շատ փառաւոր էր: Սրբաւանը խօսեց մի քարոյ, որի մէջ օրհնեց եկեղեցու շինութեան մասնակից նուիրատուներին, շինող արհեստաւորներին և մանաւանդ՝ երեցիօրս Պ. Նարամիչեանցին, որչորս տարի շարունակ ջանք էր թափել շինութիւնն աւարտելու և ծախսերը կրճատելու համար: Քարոյից հետոյ սկսվեցաւ պատարագը, որ վերջացաւ ժամի 3-ին Նորակառոյց եկեղեցու հիմնադրութիւնը կատարվել է 1868 թւին, բայց միայն ներկայ 1887 թւին այնքան է պատրաստվել, որ կարելի է նրա մէջ եկեղեցական պաշտօն կատարել: Եկեղեցու թէ դրոյից և թէ ներսից դեռ եւս մնացել են թերութիւններ, բայց առհասարակ եկեղեցին մի հիւանալի շինութիւն է ներկայացնում, որի նմանը, ինչպէս հաւատացնում են շատերը, չը կայ Կովկասի և ոչ մի հայաբնակ տեղում: Նա շինված է սրբատաշ սալաքարերից, հին Հայոց ճարտարապետութեան կանոններով: Ճարտարապետը գոաւորութեան եւ ոճի կողմից աչքի առաջ է ունեցել Անիի մայր եկեղեցին: Այժմ պակաս է միայն գմբէթը, բայց այդ էլ ինչպէս յայտնեց սրբազանը, յանձն է առել շինել տալ իւր հաշուով Երեւոյի Պ. Թադէոս թաւմարեանց: Տասն եւ ինն տարվայ ընթացքում եկեղեցու շինութեան վրա Ղազանչեցւոյց եկեղեցու ժողովուրդը ծախսել է հարիւր հազար ռուբլոյց աւելին»

(Մշակ)

Ամեն մարդու համար ԱՌՈՂՁՈՒԹԵԱՆ գլխաւոր պայմանն է թող չտալ որ մարդասեր մնայ լեարդին վրայ: Արդ, Տփլիսի Հէյդուտ Արքեպիսկոպոս հանրահալի Դեղահատները մասնաւորապէս շինուած են լեարդը մաքրելու համար: Թէ՛ անորոշապէս են, և թէ՛ մէկ անգամի համար մէկ դեղահատ կը բաւէ: Իւրաքանչիւր շիջ կը պարունակէ 20 դեղահատ: Կը ծախուի գլխաւոր դեղատան մէջ: Ընդհանուր կեդրոնատեղին է Դեղագործական Միութեանոցն, Կալաթայի մեծ փողոց, 35 (կայարանի թրամուէից): Գաւառները կը շրջուի առանց փոխադրութեան ծախքի, հանդերձ ծանօթութեամբ, և մեկնութեամբ, ի փոխարէն 10 դրոյի: Թղթատարական տոմսի:

ՂԱՐԱԲԱՂԻ

(5)

ԱՍՏՂԱԳԵՏԸ

Թ.

ՓԱՆԱՀ ԽԱՆԻ ՄՕՏ ՀԱՍՆԻԼԸ

Գեսպանախումբը ճանապարհ ինկաւ միւս օրը կէս օրին: Զուգուղ հագած էր մի տեսակ թրքական հարուստ զգեստ, զարդարուած ոսկեհոռ ժապաւէններով: Նստած էր արաբական սեւ նոյզի վրայ. իւր խուրը բաղկացած էր երեք հարիւր զինեալ անձերէ: Զիւռորներն իրենց յարգանքը ցոյց տալու համար Զուգուղի քովէն չէին ընթանար այլ առջեւէն եւ ետեւէն, բաւական հեռուն:

Ճանապարհին Զուգուղ հրամայեց աստղագէտին որ ձին իւր ձիուն քովէն քէն իւր թէ աստղերու բարեյաջող ընթացքի հետ իրենց ընթացքը յարմարեցնելու մասին խօսելու համար, բայց իրապէս խօսեցան Սալիհայի մասին եւ Զուգուղ պատուէրներ կուտար աստղագէտին թէ ինչպէս պարտաւոր էր նա առանձինն տեսնուիլ Սալիհայի հետ առանց ուրիշի ներկայութեան:

Երբ մօտեցան Զուգուղիցինքու իջեւաններուն, ճանապարհին կանգ առին եւ աստղագէտը մարգագետինն վրայ նստելով սկսեց նախագուշակութիւններ ընել թէ երբ կը հասնի բարեյաջող ընթացք իջեւանները մտնելու համար, եւ ուրախութեամբ բացագոյնեց:

—Երեկոյեան ժամուն, երբ արեգակը խոնարհած է դէպ ի իւր մուտքը, դուք կարող էք մտնել Փանահ խանի իջեւան, եւ կարող էք մտնել իսկոյն, զնալ նորա մօտ: Նա սիրով կ'ընդունի զձեզ եւ յաջողութիւն կը գտնէք ձեր նպատակներու համար: Իսկ ինձ՝ այժմ ահա հրաժեշտ է բաժնուիլ ձեզմէ եւ առժամանակ պահօրդով մի ուրիշ իջեւանի մէջ: Կը վերադառնամ յետոյ եւ միայն մեկը Զուգուղի կը հաղորդեմ այն գաղտնիքը զոր երեւան պիտի հանեմ աստղերու շնորհիւ, բայց կը պատուիրեմ թէ ո՛չ որ, ո՛չ Փանահ խան, ո՛չ մին իւր մարդէն պիտի իմանան իմ գալը կամ ձեր խումբին պատկանիլս:

Զուգուղ հրամայեց իւր խումբին հանել ձիերու թաւքերն եւ հանգստանալ մինչեւ երեկոյ. իսկ ինքն հեռացաւ աստղագէտին հետ ծառերու ստուերի ներքեւ եւ մի քանի խօսքեր գրելով տուաւ նմա Սալիհային յանձնելու համար: Աստղագէտը մնաք բարով ըսաւ եւ հեռացաւ:

Երեկոյեան պահուն Վարանդայի մեկը զգեստաւորութիւնը մտաւ Փանահ խանի իջեւանը: Խանն յատուկ ուրախութեամբ ընդունեց զայն վասն զի կը նախատեսէր թէ մասնակցելով այն պատերազմին զոր մեկը Դահնադարեան պիտի մղէր ընդդէմ Խամսայի մեկըներուն, ինք կարող պիտի լինէր աւելի եւս բարձրանալ նոյն իսկ ի վրաս մեկըներուն: Ուրեմն խոստացաւ Զուգուղին թէ կ'ընդունի Վարանդայի մեկը ի առաջարկն եւ թէ հինգ օրէն պատրաստ կը լինի իւր օգնութիւնը մատուցանելու:

Խանն հրամայեց որ Զուգուղին ու նորա խումբը տեղաւորեն մասնաւոր տաղաւարներու մէջ, իւր բնակարանին մօտ: Նա շատ փազանդանքով կը վարուէր զգեստին հետ եւ կ'աշխատէր ամէն կերպով գոհացում տալ նմա:

Յաջորդ օրը Զուգուղին իմաց տուին

թէ աստղագէտն իրեն կ'սպասէ մերձակայ անտառը. Զուգուղ վաղեց գնաց եւ տեսնելով աստղագէտին միջին դէմքն ապշած մնաց:

—Ըսէ՛, ի՞նչ տեղեկութիւն ունիս, դու չեց նա, մահուան բօթարե՞ր ես:

—Հանգստացէ՛ք, մեկը, պատասխանեց աստղագէտը, պատրաստուեցէք լսել մի անախորժ նորութիւն. ձեր կինը կենդանի է, բայց կը գտնուի ուրիշ տիրապետութեան ներքեւ...:

—Ի՞նչ, ուրիշ տիրապետութեան ներքեւ... ո՞ւր... ո՞վ է այդ բարբարոսը... իմ խէնջարը կը ցցեմ նորա կուրծքին մէջ... ինչո՞ւ կը լռես: Ըսէ՛, ո՞վ է:

—Ձեր կինը կը գտնուի Փանահ խանի հարեմի մէջ...:

—Փանահ խանի հարեմի մէջ... կըրկնեց երիտասարդը շփոթուած, կայծակնահարի նման: Բաւական տեսն չկարողացաւ խելքը գլուխը բերել, վերջը տկար ձայնով բացագոյնեց. ես կ'որո՞ժ եմ... եւ այդ խօսքերու հետ երերալով ինկաւ խոտերու վրայ:

Աստղագէտը բռնեց նորա ձեռքէն ըսելով.

—Մեկը, մի՛ տխրիք, հնար կայ ձեր դժբախտութեան օգնելու:

—Ի՞նչ հնար: Միթէ չգիտե՞ս որ եթէ ես կուրծքով Փանահ խանի հետ, այդու կը կը գրկեմ հօրեղբայրս այն օգնութեանէն զոր ի նմանէ կ'սպասէ: Մեր թշնամիք այն ատեն իրենց յիսկալութիւնը կը յագեցնեն մեր արիւնով եւ միայն կը դարձնեն Չանախին: Իսկ եթէ բարեկամ մնամ Փանահ խանի, կը հարկադրուիմ յաւիտեան զրկուած մնալ Սալիհայէս: Այն, այդ սարսափելի է... բայց ո՞ր եւ գաւառներս:

—Նոքա մնացեր են Սալիհայի մօր խնամոց ներքեւ:

—Պատմէ՛ այդ սոսկալի դէպքի բոլոր մանրամասնութիւնները, գոչեց Զուգուղ զայրացած կերպով. ես պատրաստ եմ ամէն ինչ ընել միայն թէ Սալիհայ աղաւտուի:

—Ձեր հեռանալէ անմիջապէս վերջ, որպէս ինձ պատմեց Սալիհայի մայրը, Փանահ խան անձամբ շրջեցաւ բոլոր իջեւանները տեսնելու իւր նոր հպատակները: Նորա մարդերէն մին պատահամբ տեսաւ ձեր կինն եւ հիացած պատմեց Փանահ խանին Սալիհայի աննման չքնադութիւնը: Խանը տեղեկանալով որ նորա ամուսինը մի խորասանցի է որ իւր հայրենիքը գնացած է, իւր իրաւունքը սեպեց իրեն սեպհակաւանցնել անտէր մնացած կինն: Ս.յդ նպատակին հասնելու համար ի գործ դրաւ այնպիսի խորամանկութիւններ որով ոչ ոք դժբախտներէն կարող եղաւ գիտնալ թէ ո՞ր անհետացաւ այդ կինը: Սալիհայի մայրն ու եղբայրները միայն գիտեն, վասն զի խանն ի հարկէ նոցա յայտնեց եւ խոստացաւ իւր հովանաւորութիւնն ու շատ ընծայներ, եւ այժմ, բարբերն այնքան ապականեալ են որ նոքա ուրախութեամբ ընդունեցին խանի խոստմունքներն: Պէտք է ըսել նաեւ որ Սալիհայի թէ մայրն եւ թէ եղբայրներն յոյս չունէին զձեզ վերադառնալ տեսնել:

Իսկ այժմ ձեր կինը, նոյն իսկ ձեր հիւր եղած տա՛ն մէջ կը տանջուի տխրութենէ, անշատուած լինելով իւր ամուսինէն եւ զաւակներէն: Կ'արտասուէ անդադար եւ այդ արտասուքը կը դառնացնեն Փանահ խանի սիրտը, վասն զի խանը իւր միւս բոլոր կիններէն աւելի կը սիրէ Սալիհայն: Եւ խեղճ կ'ինն այն աստիճան հոգեպէս կը տանջուի եւ կը մաշուի որ այժմ քողորովին

հիւանդ է, եւ Փանահ խան սաստիկ յուսահատած է :

—Արնս կը մեռնի, տէր Աստուած . . . երթանք աստղագէտ, մի՛ ուշանար, կա՛մ կ'աղատենք զնա, կա՛մ կը կորսուինք : Արդէն վճռեցի . . . կը մոռնամ ամէն ինչ . . .

—Սպասեցէ՛ք, մերկը, սպասեցէ՛ք, եթէ այդպէս ընենք, ի դուր տեղը կը կորսուինք ասանց կարողանալու ազատել ձեր ամուսինը : Այդ մի ուրիշ հնար . . .

—Ինչ հնար, ընէ՛, սիրելիք իմ աստղագէտ, ընէ՛, դու զիս յաւիտեան կը պարտաւորես : Բայց արդեօք չե՞ս խաբէր զիս :

—Ամենեւ ինչ : Փանահ խան շատ յուսահատեալ է, վասն զի ո՛չ ոք կարող է առողջացնել նորա սիրելի Սալիհայն : Ես կը ձեռացնեմ զիս բժիշկ : Խորամանկութեան մէջ վարպետ եմ, գիտէք : Ար համոզեմ խանն որ Սալիհան առողջացնելու համար անպատճառ հարկաւոր է որ տեսնուիմ հիւանդ ինչեւտ եւ կարողանամ որոշել նորա բժողաւոր եւ անբաղդ աստղերն եւ ըստ այնմ կարգադրել բժշկելու հնարքները : Փանահ խան ինձ կը հաւատայ : Երկար ժամանակ ապրած է ի Պարսկաստան եւ սովորած Պարսից սնահաւատութեան : Արդարանքս ալ հրապարիչ չէ, եւ այդ պատճառաւ վտանգաւոր չեմ համարուիր նորա հարեմի համար : Ինձ թոյլ կուտան մտնել ձեր կնոջ մօտ որով միջոց կը գտնեմ տեղեկութիւն տալ նա՛մ որ դուք կը գտնուիք այս տեղ, եւ յետոյ կ'աշխատիմ յապիշտակել զնա եւ տանիլ Չանսալի :

Այսու ամենայնիւ դուք շարունակեցէ՛ք ձեր բանակցութիւններ Փանահ խանի հետ, եւ ցոյց մի տաք ամենամիտ շնորհակալութեամբ որ դուք զիս կը ծանաչէք : Պատասխանատու եմ գործին յաջողութեան : Հիմա բաժնուինք, ձեր երկար բացակայութիւն կրնայ ուշադրութիւն գրաւել :

—Մնաք բարեաւ, իմ սիրելի աստղագէտ, հաւատա՛ որ Շահնազարեան մերկը Զուհուգը կը գիտնայ թէ ինչպէս պէտք է քեզ շնորհակալ լինի :

Նորա բաժնուեցան :

Ժ.

ԱՍՏԳԱԳԵՏԸ ԿԸ ՆԵՐԿԱՅՈՒՆՑ
ՓԱՆԱՀ ԽԱՆԻՆ

Նստած իւր վառարան տաղաւարի մէջ Փանահ խան խորին մտախոհութեամբ կը ծխէր զէյլանը, երբ ծառայներէն մին ներս մտնելով իմաց տուաւ թէ՛ մի օտարական, որ ինքզինք կը կոչէ աստղագէտ եւ Ղազվիի գիտնական բժիշկ, կը ցանկայ ներկայանալ իրեն : Փանահ խան գլխի շարժումով նշան տուաւ թէ ներս թող մտնէ :

—Այլանը եւ սուրբ մարգարէն թող օրհնեն քոջ Զուհուգը իրենց մեծախառն հրամանատարն, եւ թող լինին նորա օրերը պայծառ ինչպէս արեգակի ճառագայթներն եւ բազմաթիւ ինչպէս երկնից աստղերն, ըսաւ Ղազվիի բժիշկը գլուխ խոնարհեցնելով ձեռքին մէկը կուրծքին վրայ դրած իսկ միւսը նախ ճակատը տարաւ եւ յետոյ խոնարհեցնելով կայծուց գետնին :

Փանահ խանը բաւական նայեցաւ նորա վրայ, եւ լռութեամբ երկար ատեն զննեց յետոյ նորա օտարօտի կերպարանքն, հարցուց .

—Ինչ կ'ուզես ինձմէ :

—Սուրբ Յուսէփնը թող առաքէ ձեր վրայ իւր օրհնութիւնը : Ես լսեցի ձեր ան-

նախանկարին ամուսնի հիւանդութիւնն եւ եկայ ձեզ առաջարկելու իմ ծառայութիւնները :

—Միթէ յոյս ունի՞ս աւելի բախտաւոր լինիլ քան թէ քու միւս արհեստակիցներդ որք ի դուր գործ դրին իրենց բոլոր հմտութիւնները :

—Արեւի է նորա չէին կարող հասկնալ աստղերու չղաններն եւ նոցա աղղեցութիւնը մարդուս վրայ . . .

—Իսկ դու կը հասկնաս :

—Քան սուրբ իմամներու ինձ շնորհած կարողութեամբ ես ուսումնասիրած եմ բոլոր խելիքները զբոյս ամենաբարձր խորհուրդներն : Իմ վարդապետն եղած է հոգեւոր Շէյխ-Աբդուլ-Փաթիւ-Ալին :

—Լա՛ւ, դու կարող ես փորձել քու արուեստդ եւ կարող ես յուսալ թէ կրնաս ստանալ նշանաւոր ընծայներ : Եթէ յաջողութիւն ցոյց տաս : Ես կը հրամայեմ իմ կնիկներուն վերադառնալ ինչեւտ եւ նա պատմէ քեզ Սալիհայի հիւանդութեան մանրամասնութիւններն եւ դու կ'ընես ինչ որ պիտոյ է :

—Լա՛ւ, լա՛ւ, ինքն իմաստութիւնը կը խօսի ձեր չղաններով : Բայց ներեցէ՛ք ձեր դրան չէմքի ստրուկին յայտնել իւր խոնարհ կարծիք, որ տարաշէտ բժշկութիւնը երբեք չէ կարող իւր նպատակին հասնիլ : Առանց ճիշդ կերպով որոշելու թէ ի՞նչ աստղ է առաջնորդած ձեր մեծապաշտաւ կնոջ ծննդեան (որոյ գեղեցկութիւնը թող գերազանցէ քան զլուսինը), չէ կարելի որոշել նաեւ բժշկելու եղանակները . . .

—Ուրեմն ինչ կը պահանջես :

—Տեսնուիլ հիւանդին հետ եւ կէս ժամուս ցափ առանձին խօսիլ նորա հետ, առանց վիրայներու ներկայութեան :

—Խօսիլ նորա հետ . . . կէս ժամ . . . եւ ասանց վիրայներո՞ւ . . . կրկնեց խանը կատաճաւոր կերպով նայելով աստղագէտին :

Բայց լաւ հետազոտելով նորա այլանդակ կերպարանքն եւ այն անփոքր ձեւը զոր ունէր աստղագէտը, խանը պատասխանեց .

—Լա՛ւ, համաձայն եմ : Եթէ կը ցանկաստեսնել կրնաս :

—Նոյն իսկ այս րոպէիս :

—Նստե՛քս եկուր, ըսաւ խանը :

Աստղագէտին շատ հաճելի չէր տեսնել որ խանն անձամբ ներկայ պիտի գտնուի Սալիհան բժշկելու ժամանակ, որով կրնային խանգարուիլ իւր բոլոր գիտաւորութիւնը, Բայց ուրիշ հնար չկար : Զննած սրտով գնաց խանի ետեւէն, օգնութեան կանչելով իւր բոլոր հմտութիւնը խաբեքայութեան արհեստին մէջ :

Երբ նորա մտան կանանոցը, զարմացան կնիկները տեսնելով որ մի օտար մարդ կուգայ, սաստիկ ճիշ բարձրացուցին եւ փախչելով ծածկուեցան իրենց սփածանելիքներու մէջ : Սալիհան պառկած էր անկողնի մէջ, տախտի վրայ, չարժանակի պատած պորսկական գորգերով, Գունաթափ էր նորա չքնաղ դէմքը, խորունկցած էին գեղեցիկ աչքերն եւ դէմքի բոլոր գծերու վրայ կը տեսնուէին հոգեկան սաստիկ տանջանաց նշանները :

—Ճա՛նէ՛ք, ըսաւ Փանահ խանը, մօտենալով նորա անկողնին, քեզի համար բերի մի նոր եւ շատ հմուտ հա՛թ, որ մի եւ նոյն ժամանակ լաւ աստղագէտ է : Հաւատի եմ որ նա կը բժշկէ քեզ, խօսէ՛ նորա հետ :

Սալիհան իւր տխուր աչքերը դարձուց դէպի նորեկն եւ տեսնելով աստղագէտին ծիծաղելի կերպարանքը չկարողացաւ զըս-

պել իւր ժպիտը : Բայց վերստին տխրեցաւ եւ ըսաւ .

—Շնորհակալ եմ ձեր աշխատութեան համար, որ բոլորովին ի դուր է իմ հիւանդութիւնն անրութելի է . . . դուք գիտէք . . .

—Ինչո՞ւ, խանս, անձնատուր կ'ըլլաք յուսահատութեան, ընդ միջեց աստղագէտն : Այլանը եւ սուրբ մարգարէն տնօրինած են ձեզ համար շուտափոյթ առողջութիւն . . .

—Ինձ համար . . . պատասխանեց Սալիհան, աչքերը բարձրացնելով նորա վրայ :

Այդ միջոցին աստղագէտը կարող եղաւ իւր աչքերուն ու յօնքերուն խորհրդաւոր շարժումներով այնպիսի նշաններ ընել հիւանդին որ նա հասկցաւ, բայց խանն ոչինչ նկատել կարող եղաւ :

—Այսպէս ուրեմն, դուք կը կարծէք, շարունակեց հիւանդը, գառնալով դէպ ի խանը, որ ես կարող եմ վստահ լինիլ այդ հա՛թին :

—Անտարակոյս :

—Երբ այդ պէս է, մօտ եկէ՛ք, հաթիմ, եւ ըսէք ի՞նչ պարտիմ ընել :

—Թոյլ տուէ՛ք ինձ, խանս, պատասխանեց աստղագէտը, նախ հաշուել աստղերու ընթացքն եւ ասլա որոշել այն աստղն որ լուսաւորած է ձեր ծննդեան րոպէն :

—Այդ ո՞րքան ժամանակ կը տեւէ, հարցուց Փանահ խան :

—Արող չեմ ժամանակը ճշգրտութեամբ ըսել, այդ ինձմէ կախուած չէ, պատասխանեց աստղագէտն :

—Իսկ այդ դուշակութիւնները կարծեմ կարելի է կատարել նաեւ իմ բնակարանիս մէջ :

—Ամենեւ ինչ, խան, պատասխանեց աստղագէտն, ո՛չ միայն կարելի չէ կատարել ձեր բնակարանին մէջ, այլ նաեւ այս տեղ չէ կարելի եթէ ինձ հրաման չի տաք միայնակ մնալ խանուսի հետ :

—Քե՞զ . . . միայնակ . . . կրկնեց խանն, այդ նո՞ր քան է :

Գարձեալ սկսաւ ուշադրութեամբ նայիլ աստղագէտին, բայց նորա կատարեալ այլանդակութիւնը փոքր ինչ հանդարտեցուց խանին կասկածն, եւ նա հարցուց .

—Միթէ կարելի չէ՞ այս տեղ թողուլ գտնէ մի ներքինի :

—Ո՛չ :

—Լա՛ւ, աստղագէտ, ըսաւ Փանահ խան, դու առաջինն ես իմ տեսած բոլոր հաթիմներէն եւ աստղագէտներէն որ կը պահանջես այսպիսի նախադրութիւն : Արդեօք թագցուած չէ՞ մի քան այդ օտարօտի պահանջումներու տակ : Տե՛ս, զգոյշ կեցիր : Փանահ խանը գիտէ արժանաւոր կերպով վարձատրել ծառայութիւնները, գիտէ եւ խիստ կերպով պատժել անհաւատարմութիւնը :

—Մի՛ բարկանաք, խան, ըսաւ Սալիհան անդուշտութեամբ, կարելի է դա բոլորէն աւելի հմուտ է : Թոյլ տուէ՛ք ինձ խօսիլ նորա հետ :

Փանահ խան այդ խօսքերէն սպասածէն աւելի շատ քան հասկցաւ : Նոյն րոպէին հրամայեց ներքինիներուն տանիլ բոլոր կնիկներն հարեմի միւս բաժինն եւ թողուլ աստղագէտն միայնակ Սալիհայի հետ :

—Ես կը հեռանամ, ըսաւ նա աստղագէտին, եւ յոյս ունիմ որ դու կ'աշխատիս շուտ աւարտել գուշակութիւններն . . . եւ կը հաւատամ որ դու կը վարձատրուիս քու բժշկութեանդ համար . . . աւելցուց նա կրճու ժպիտով մը, եւ դուրս ելաւ հիւանդին սենեակէն :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՌԱՆՏԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ վրայ երկար և աղմկալի վիճարանութիւնը կը շարունակին Անգլիոյ Երեսփ. Ժողովոյն մէջ, որ աշխարհի ամենէն բարեկարգ Խորհրդարանը լինելու իրաւացի համարուել կը վայելէ: Պատժական բացառիկ Օրէնքին երկրորդ եւ վերջնական քուէարկութիւնը տեղի ունեցաւ, աջակցութեամբ Պահպանողականաց և Միութենական - Ազատականաց, որոց եւ կըտաստեանց միջեւ համաձայնութեան մը յայտարարեց թէ «Իսլանտական Ազգային Դաշնակցութիւնը» դաւաճող մարմին մ'է, որ ոյժ կը գտնէ մատնիչներէ, մարդասպաններէ, ուժանակաւորներէ և Ուկրէանու միւս կողմէ գտնուող ուրիշ եղբունադործներէ, և ամբաստանեց սոյն Դաշնակցութեան պետերը թէ գործակից եղած են այնպիսի մարդոց, որոց մարդասպաններ լինելը գիտէին: Այս ծանր յայտարարութիւնը ճշմարիտ փոթորիկ մը յարուցին Ժողովոյն մէջ, Իսլանտացի Պ. Մէքսթըն յայտարարեց որ եթէ ատենաբանն զինք կ'իյնարկէ, ինք հրապարակաւ պիտի ըսէ թէ ինչպիսի անականի մը արժանի է ատենաբանն: Իսլանտացի Պ. Հիլի աւելի բացորոշապէս ըսաւ որ եթէ Գնդ. Սոնտըրըն զինք կ'ականարկէ, «սպառ» մ'է: Նախագահն այս անականին համար ի կարգ հրաւիրեց զՊ. Հիլի որ մերժեց ետ առնուլ զայն, ցորչափ գնդ. Սոնտըրըն յետո կոչուաւ չընէ: Երեսփոխանութեան Վարիչ Պ. Սմիթ պահանջեց ըստ Ներքի Կանոնագրի՝ Պ. Հիլի դադարումն, որ քուէարկեցաւ 52ի դէմ 118 քուէով: Պ. Հիլի, որ «սպառ» անականը Գնդ. Սոնտըրընի երեսն ի վեր արձակած պահուն արդէն ջերմ ծափերով ընդունուած էր Բառնէլեաններէն, եւս աւելի ջերմ ծափահարութեամբ ընդունուեցաւ, երբ կը մեկնէր Ժողովէն Գնդ. Սոնտըրըն, շարունակելով, կրկնեց թէ Իսլանտական Դաշնակցութեան անդամը, որք Պ. Շէրիտանի ընկերակից եղած էին, գիտէին հարկաւ թէ մարդասպան մ'էր նա: Պ. Մէքսթըն, սաստիկ ընդմիջմամբ մը, անուանեց զԳնդ. Սոնտըրըն «վատ» և յամար «սպառ», և ծանոյց թէ «խեղճ պիտի անիծէ» անգամ մը որ Ժողովէն դուրս հանդիսի իրեն: Նախագահը միջամտեց, ի կարգ հրաւիրելով զՊ. Մէքսթըն, որ բացարձակապէս յայտարարեց թէ այս անխորհրդարանական անականներն յետո չպիտի կոչէ մինչեւ որ Գնդ. Սոնտըրըն յետո չկոչէ այն յայտարարութիւն թէ Իսլանտացի կուսակցապետը մարդասպաններու ընկերներն եղած են գիտութեամբ Գնդ. Սոնտըրըն յետո կոչուաւ ըրաւ, հնազանդելով Նախագահին հրամանին, եւ յայնժամ Պ. Մէքսթըն եւս նոյնն ըրաւ: Գնդ. Սոնտըրըն շարունակեց իւր ճառ, և թէպէտ ամեն մէկ պարբերութիւնն ընդմիջեցաւ Բառնէլեաններէն, պնդեց թէ, Իսլանտական Ազգային Դաշնակցութեան մէջ կան չափ մը «հանրաժանութ» ոճրագործներ, խորհրդակիցներ և գործակիցներ Ֆէնեաններու, ուժանակաւորներու, և ինչ: Իսլանտացիք զիտել տուին Նախագահին թէ, քանի որ Գնդ. Սոնտըրըն ետ առաւ իւր նախատական բացատրութիւններ, Պ. Հիլի Ժողովէն արտաքսման տեղի չէր մնար: զի յայնժամ նա եւս ետ պիտի առնուր իւր

գործածած անականը: Նախագահը պատասխանեց թէ, քանի որ նոյն օրը քուէարկութիւն մը տեղի ունեցած էր Պ. Հիլի արտաքսման համար, Ժողովը մի և նոյն օրը չէր կրնար երկրորդ քուէարկութեամբ մը առաջինն եղծել: Բայց յաջորդ նստի մը մէջ կրնայ: Ըստ այսմ, յաջորդ նստին նոյն ինքն Պ. Սմիթ պիտի առաջարկէր որ Պ. Հիլի դէմ արձակեալ արտաքսման վճիռն եղծուի: Նորագոյն հեռագրոյ մը նայելով, ապրիլ 19ի նստին մէջ, Լորտ Հարդինկըն ամբաստանած է զՊ. Բառնէլ եւ իւր կուսակիցներ թէ յարաբերութիւն ունին Ամերիկայի Ֆէնեաններուն հետ: Միութենականաց մեծ փաստերէն մին ընդդէմ ինքնօրինականաց սա է այժմ թէ Իսլանտացի Ինքնօրինութիւն պահանջող Բառնէլեանը Անգլիոյ դէմ ուղղեալ քաղաքական ոճրագործութեանց համարս և գործակից են: Օրէնքն ոտքի տակ առնուլ կը յանձնարարեն, անկեղծ մարդիկներ չեն, եւ թէ իրենց բուն դիտումն է Իսլանտական Ինքնօրինութիւնը գործիք ընել Իսլանտան դատ Տէրութիւն մ'ընելու համար, Անգլիայէն անջատ:

ԱՌ. ԵՒՈՂՍ

Յաճախ կը պատահի որ կուրծքը կը յոգնի ծխախոտի մոլխէն եւ չնչափողի խողովակները կը գրգռին: Այս պարագային մէջ, լաւագոյն բանն է ՆԻԲՈՍԻՏԻ բասդելը մը առնուլ մէն մի գլանիկէ յետոյ: Այս հեշտահամ շաքարահատը կը զովացնէ չնչառութիւնը, կը մեղմէ խողովակաց ցաւերն եւ բարերար ազդեցութիւն մ'ի գործ դնէ, որովհետեւ կը պարունակէ ծխախոտին դեղութիւնը եւ կը ջնջէ անոր վնասակար ազդեցութիւնները: Ներքսիտի Բասդելը տուփերը կը ծախուին ի գին 4 շրուշ, կը գտնուին ամեն լաւ դեղատանց մէջ: Ընդհանուր կեդրոնատեղին է Դեղագործական Մըթերանոցն, Ղալաթիա մեծ փողոց թիւ 35 (Կայարան Թրամուէյից):

Սրտոնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵՆԵՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵ ԻՍԿԱՐՈՒ



ՄԱՏԵՍՄԱՆ ԱՆՆԱՆԻՆ
ԵՒ ԽԵՐՈՒՄԵՆՈՒԹ ԵՒ ՄԱՏԵՍՄԱՆ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը: Գլխու թերի շուտ մը անկեղծութիւն կ'ընէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի: «Մէկ շիշը կը բաւէ»: Այս փորձը ունեցան ամենքը օրոնցմանը անձնաւորներն անկեղծութեամբ իրենց դարձան, և ճաղատ տեղերը մաղով ծածկուեցան: Ինչ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր ԿԵՆՆԱՆԻՆ ՄԱՏԵՍՄԱՆ ԱՆՆԱՆԻՆ (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.) Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Երկրորդ և Կիլու Եօրք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգլիացի դեղագործներու քով:



ՎԵՐՄԵՆԵԿԱՆ ԴԱՆԴԿԵՓՈՒՆԸ
ԳԵՂԵՑԻՆՈՒՆՈՒՄ, ՄԱՏԵՍՄԱՆ ԳՈՅՆԸ, ՄԱՏԵՍ
ԴԱՆԿԵՓՈՒՄ, ՄԱՏԵՍ ԴԱՆԿԵՓՈՒՄ:

Ընդամենն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ և բազմաթիւ փոշիներէ: Առաջին անգամ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեսը, վեղը, թեւերը և ձեռքները պիտի առնուն անոյշ փափկութիւն մը և մարմարիոնի փայլ: Հանգերն շուշանի և վարդի գունով և բուրմամբ: Կարգին գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցուն: Ընհետ կ'ընէ մարմնի սեւութը, երեսի և ձեռքի ցանկերը, արևայրութիւնը, և ուրիշ ամեն բրտութիւն և բժաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի կ'ընէ մասնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է: Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Երկրորդ և Կիլու Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգլիացի դեղագործներու քով:



ԿԵՆՆԱՆԻՆ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱՏԵՍՄԱՆ
ՄԱՏԵՍՄԱՆ
ՄԱՏԵՍՄԱՆ ՄԱՏԵՍ ԴԱՆԿԵՓՈՒՄ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմակած կամ գունաթափ մազերը: Կը դադրեցունէ անոնց թափելը: Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ: Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ: Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Երկրորդ և Կիլու Եօրք: Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիլը եղբայր բրիտանական դեղարանը, բերտ, Մեծ փողոց: Իտմիւտ Բարուանա, Անգլիական մթերանոց, Նիւքսթը Գալորըրը, և Իգիտոր Լագանտէլա 435, բերա Մեծ փողոց: